ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ ՎԱՂԱՐՇԱՊԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 2070-Ա

09 նոյեմբերի 2026 թ. ք. Էջմիածին

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում առկա է համայնքային ծառայության թափուր պաշտոն, իսկ դրա համալրումը անհրաժեշտ է համայնքի լիարժեք աշխատանքային գործունեության համար.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վաղարշապատի համայնքապետարանի աշխատակազմում առկա համայնքային ծառայության թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացնել մրցույթ, ըստ սույն որոշման հավելվածի:

2. Մրցույթի տեխնիկական սպասարկումն իրականացնելու, մրցութային հանձնաժողովի աշխատանքների բնականոն ընթացքը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 30.10.2025թ. թիվ 27-Ն հրամանով հաստատված կարգով սահմանված այլ դրույթների իրականացումն ապահովելու նպատակով մրցույթի անցկացման պատասխանատու նշանակել աշխատակազմի փաստաթղթաշրջանառության և մարդկային ռեսուրսների կառավարման բաժնի պետ Դավիթ

Լալայանին և համակարգչային աշխատանքների պատասխանատու՝ նույն բաժնի պետի տեղակալ Անի Բաբաջանյանին:

3. Հայտարարությունը հրապարակել համայնքի պաշտոնական համացանցային կայքում, ինչպես նաև հայտարարությունը հրապարակել Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների՝ http://www.azdarar.am պաշտոնական համացանցային կայքում:

4. Սույն որոշումն ընդունելուց հետո երկօրյա ժամկետում համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների մասին պատշաճ տեղեկացնել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ,

Ստորագրող
ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ
3805900589

2026-11-09 14:34:41 GMT+4

ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ՝ **Լ. ՅԱՅԼՈՅԱՆ**